լորդ կը համարիմ գրել, վասնզի լսած էք անշուշտ թէ ինչպէս պատուով ընդունուեցանք ի Վեհ. Կայսերէն, Կորչաքով Իշխանէն և միւս նախարարներէն... Հոս ամենայն ինչ առ այժմ յաջող դիրքի մէջ է։ Աղօթենք Աստուծոյ, որ խաղաղութիւնը հաստատուի և զեսպանաժողովը գումարուի, այն ատեն կը յուսանք որ Աստուծոյ այցելութիւնը զմեզ մխիթարէ, շնորհելով հայրենեաց մերոց երջանկաւէտ ապագայ...»։

(Շարայարելի) Հ. Ե. ՏԱՅԵՑԻ

## ՊԱՏՄԱԿԱՆ

### ՆԻՒԹԵՐ ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

### Փ. ՊՈԼՍՈՅ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԻՐՔԵՐԸ ՁԵՌԱԳԻՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՎ

Ցանկս կազմած եմ 1917ին ընդհանուր պատերազմին ատեն երբ Պուլկարիոյ Փ. Պոլիս՝ այսինքն Ֆիլիպէ քաղաքը ապաստանած էի։

Թիւ 1. — (Եկեղեցական անօթ թիւ 85,270 կրամ կամ 97 տրամ արծաթ) Աւետարանիս արծաթապատ կողքը ունի հետեւեալ արձանագրութիւնը։ «Յիշատակ սուրբ աւետարանս Պետրոսի որդի տրացու օվհանեսի և կողակցին քրաքիօնին և որդւոյն տրցու մարտիրոսին սուրբ Գէորգայ թվին ՌՄԻ (1771)ին Յուն.»։ Բաւական աշխատուած բայց կոշտ փորագրութեամբ երկու կափարիչներ են որոնք կէսառկէս կը պարունակեն վերեւ արտագրեալ յիշատակարանը։ Ա. կողքը ունի աստղեր, Ս. Յովսէփ Յիսուսը գրկած. նոյն կողքին վրայ կան նաեւ Աստուած, սուրբ մը և արծիւ մը, Յովհաննու Կարապետի գլխատուած մարմինը։ Իսկ Բ. կողքին վրայ չորս աւետարանիչները իրենց անուններով Յոհանէս, Մաթէոս, Մարկոս, Ղկաս, նաեւ հրեշտակներ, Յիսուս խաչեալ. իսկ սեւ խաչին վրայ կան ծանօթ Յ. Ն. Թ. Հ. գրերը, խաչին վերեւ կ'երեւի Աստուած։ Գրքին մէջ ուրիշ արձանագրութիւն չկայ։

Թիւ 2. — Նոր կտակարան տպ. Վենետիկ Անտոնի Պոռթօլի, 1766 մայիս 20, էջք 420. Թաւշապատ կողք՝ որուն վրայ հետքերը կ'երեւան Յիսուսի խաչելութեան և յարութեան քանդակներու ինչպէս նաեւ հրեշտակներ և անընթեռնլի յիշատակութիւն։

Թիւ 3. — Աւետարան կաշեկազմ արծաթ թիթեղ զարդերով զարդարուած։ Ներքին Ա. կողքը ունի. «Յիշատակէ սբ. աւետարանս ունձեան ռափփաիլէ դուստրի զոր եւտ վայելչուն սբ. Ստեփանոս եկեղեցւոյ տր. մեսրոպին 1803 յուլիս 22»։ Ս. Ստեփանոս Փ. Պոլսոյ Ս. Գէորգ եկեղեցւոյն աջակողմեան պահարանին կամ մատուռին տրուած անունն է։ Նոյն աւետարանին մէջ դարձեալ կայ. «Ի Ֆիլիպէ սբ. Գէորգայ եկեղեցւոյն յիշատակ է այս սբ. աւետարանս մանուկ աղայի փեսան պողոսին հանգուցեալ հօրըն բուխարիցի մհսի. գէորգ ամիրային մհսի. խչատուրին և համայն ննջեցելոց հոգին»։

Թիւ 4. — Խորհրդատետր տպ. Կ. Պոլիս ի Նորակերտ տպարանի Գրիգոր դպրի Մարզուանցւո, թվին ՌՃԾԷ (1708)։ Գիրքս կը գտնուէր գէշ վիճակի մէջ։ Վերջի թերթին Բ. սիւնակին վերջը նօտրգիր գրուած է.

«Յիշատակ է խորհրդատետրս երեւանցի բումայ որդի տիրացու ալիքսանին այլ և օծեալ վէմս որ օծեցաւ ի կոստանդինուպոլիս պատրիարք սբ. կարապետոյ վանից աւետիք վարդապետի ձեռօքն յիշատակ մանատրու ժողովրդեան թվին ՌՄԺԲ (1763)»։ — Իսկ վերջին ներքին կողքին վրայ... «Թ-վին 1210 (1761)ին յուլիսի օնին որ էս Սօֆիայի տր. մարտիրոս նորենձաս եկի մանազրիր ով եղբարք քահանայք խիստ պարտոր կու մատչէք իս մեղաւորս յիշիք և յիշեալ լինիցիք առաջի աստուծոյ»։

Թիւ 5. — Կարգ Թաղման կարգաւորաց Էջմիածին տպ. Գրիգորի Լուսաւորչի ՌՄԻԶ (1777) կաշեպատ տախտակ կազմով։ Ներքին կողք Ա էջ.

«Յիշատակ է սբ. գիրքս ընծայեալ ի շնորհաշի Սբյ. Աթոռոյ Էջմիածնի ցահակալին և ընդհանուր Սբզան. հայրապետի Տն. Տն. Ղուկասու ի վայելումն շօռօրեցի տր. Մանուել ընտիր քահանային որ ի Ֆիլիպէ ի ՌՄԻԶ (1777) թվին յամսեան յունիս Գ.»։

Թիւ 6. — Գրքոյկ կոչեցեալ երգարան ՌՄԻԱ (1772) — Պետրոս Վրդ. Ղափանցւոյ ի տպ. Աս-

digitised by A.R.A.R.@

տուածատուրի Կ. Պոլիս։ Ներքին կողք Բ. էջ. «Գիրք որ կոչի երգարան արդեամբ Ֆիլիպեցի Մուրատեան սարաֆ Թադէոս աղայի որդի Պետրոս աղային ի թուին փրկչին 1824 և մերայնոց ՌՄՀԳ (1273)»։

Թիւ 7. — Աւետարան, թաւշապատ արծաթ դրուագներով. Եկեղ. անօթ թիւ 86, 80 կրամ արծաթ։

Թիւ 8. — Աւետարան, հրաշալի արծաթ կափարիչով, ոսկից վանտալ ձեռքեր կտորներ պակեր են և կամ անխնամ կերպով հոգ չտարուելով փճացեր է։ Եկ. անօթ թիւ 83, 630 կրամ։ Տպ. Յօհաննէսի և Յակոբա 1769 մայիս 4։ Արծաթ Ա. կողքին վրայ կայ սա յիշատակագրութիւնը։ «Յշտկ. է սբ. աւետարանս Ֆիլիպեցի յուսահոգի աղա եկի... Բ. կողք. որդոյն պատմաձի խաչատուրին և գէորգին ի դուռն Ֆիլիպէու սբ. Գէորգ եկեղեցւոյն ՌՄԻԱ (1772)»։

Թիւ 9. — Նոր կտակարան թաւշապատ եկ. անօթ թիւ 96, կր. 410 արծաթ կամ 251 տրամ. «Յշտկ. այս Ֆիլիպեցի տիրացու Սարաֆ Թադէոսի եւ որդւոյ Պետրոսին ի դուռն սբ. Գէորգայ»։ (Նոյն անձին յիշատակարանը տես նաև թիւ 6, 1824 թուականաւ)։

Թիւ 10. — Գիրք Սաղմոսաց Դաւթի, Կ. Պոլիս տպար. Յովսէփ Գավաֆեան 1872։

Թիւ 11. — Ջայնաքաղ Շարակնոց հին, կաշեկազմ. ունի Լուսաւորչայ մէկ գեղեցիկ մեծադիր նկարը։

Թիւ 12. — Նարեկ, տպար. Օրթագիւղ Պ. Արապեան Ապուչեղցւոյ 1844։

Թիւ 13. — Խոշոր լուսանցազարդերով աւետարան մը խիստ քայքայուած և պակաս։

Թիւ 14. — Տօնացոյց քայքայուած և պակաս։

Թիւ 15. — Նոր կտակարան տաճկաբարբառ։ Տպագ. Իզմիրտէ Կուլիէլմոս Կրիֆիթին պասմախանէսինտէն 1843։

Թիւ 16. — Ուրիշ մ'ալ տպուած 1840ին։

Թիւ 17. — Քերականութիւն Կ. Պոլիս ի տպարանի Ս. Աստուածածնի 1808։

Թիւ 18. — Մենմուայի... Մաթպաի Արամեան 1872։

Թիւ 19. — Մաշտոց Կ. Պոլիս Օրթագիւղ, ի տպարանի Արապեան Պօղոսի Ապուչեխցւոյ և երից որդւոց Աստուածատրոյ, Գէորգայ և Գալուստի, 1824։

Թիւ 20. — Գրքոյկ կոչեցեալ երգարան Պետրոս վարդ. Ղափանցւոյ հրատ. Կ. Պոլիս 1772, ի տպարանի Աստուածատուրի։

Թիւ 21. — Քերականութիւն հայոց լեզուի հրատ. Կ. Պոլիս Օրթագիւղ Պօղոս Ապուչեխցւոյ 1826։

Թիւ 22. — Քերական Կ. Պոլիս 1808, ի տպարանի Ս. Աստուածածնի։

Թիւ 23. — Նարեկայ վանից վանականի Նարեկ. տպագ. Յ. Միւհէնտիսեան Ղալաթիա 1858 Կ. Պոլիս։

Թիւ 24. — Պէշ Տէհր Ֆէրգի 1838։

Թիւ 25 էն 45.–20 հատ Աւետարան և Շարակնոց խիստ քայքայուած և փճացած։

Թիւ 46. — Յայսմաւուրք հրատ. Պ. Ա. Ապուչեխցւոյ 1834ին Օրթագիւղ Կ. Պոլիս, գէշ կերպով քայքայուած, ունի սա երկու յիշատակարանները։

Ա. Այս այսմաւուրքս Ֆիլիպէու Սբ. Գէորգայ եկեղեցւոյն մէջն եղեալ վարդապետաց, քահանայից, սարկաւագաց, դպրաց և մանկանց. տէր ած. ի բարի վայելումն պարգեւեսցէ։

Բ. Յիշատակ է Արեւել երկրին և Նախիջեւանու գեղջէն Ղազանցեցի պաշխունեանց հանգուցեալ հայրապետեան սարաֆ .... աղայի կողակից հանգուցեալ գիւմլիւթ խաթունին և դստերն հանգուցեալ սրթհաթ տուատուին և ծնողաց նորին հին և նոր ննջեցելոց հոգիքն տէր լուսաւորեսցէ և իւր կենդանեացն արեւշատութիւն պարգեւեսցէ ով ոք որ կարդայցէ մի հայր մեր ասացէ, հայր մեր ու յերկինս սբ. եղ. Թուին Հայոց ՌՄՁԳ (1834) և հոկտեմբերի ԺԸ–18–։

Թիւ 47. — Գիրք սբ. Աւետարանին Կ. Պոլիս ի տպարանի Գնդերեւանցի Վանի որդի.... Թուին հայոց ՌՃԾԹ (1710)։ Ունի հետեւեալ երկու յիշատակարանները ձեռագիր։

Ա. Յիշատակ է Ս. աւետարանս գաղեցի Էվէլջանենց մահտեսի սահակին և իւր որդի երեմիային և իւր կողակցուն, և իւր որդի պաղուկին որ և աւինք ամենին յիշատակ, ի դուռն յուլուբայու սբ. Գէորքին, ով որ կարդաք և կամ օրինակէք, և թէ հարեւանցի կարդայք միով հայր մեղայիւ յիշեցէք զվերոյգրեալքս եւ դուք յիշեալ լինիք ի քսէ.. այ. մերոյ։ Ամէն հայր մեր որ աս ի թվն. ՌՃԿԱ (1712)ին մայիսի ԺԸին։

Բ. Յիշատակ է սբ. աւետարանս գիւղըցի Էվալջանենց, մահտեսի սահակի որդի էրէմիային և մօրն խուբլարին և եղբօրն պաբիկի որ և յիշատակ տվէցինք ի դուռն հուլուպայու սբ. Գէորգ անուամբ կառուցեալ սբ. եկեղեցւոյն–ով որ զայս սբ. աւետարանս ընթեռնու կամ օրինակէ միով հայր մեղայիւ յիշատակեսցէ զվերոյգրեալ հանգուցեալ հայր իմ զմահտեսի սահակն և ....... Մնացեալը պատռած։

digitised by A.R.A.R.@

Թիւ 48. — Երաժշտական ի տպարանի տիրացու Յօհաննէսի և Տիրացու Յակոբա 1768։

Թիւ 49. — Նոր կտակարան հրատ. Վենետիկ Անտոնի Պոռթօլի 1766 մայիս 20։ Եկեղեցական անօթ թիւ 88 արծաթակողք։ Ա. կողքին վրայ կայ խաչ մը սա յիշատակարանով

Ի Յիշէ. Մ
պարոն
Սէրովբէի դուստր Զի
պա խաթու ին սբ.
Գէորգ
Հ Եկեղեցին Զ

անկիւնի չորս գրերը կը կազմեն թուականը ՌՄՀԶ (1827)։ Գործը բաւական յաջող և գեղեցիկ է որուն տեսակը ծանօթ է իբր չիֆթ իշի։ Կապոյտ և կարմիր քարերով զարդարուած և չորս անկիւններն ալ ոսկեզօծուած. ծանրութիւնը 62 տրամ արծաթ։

Թիւ 50. — Կարգաւորութիւն 1795 Կ. Պոլիս տպ. Մատթէոս դպրի։ Այս հատորս ունի պուլկարերէն և հայագիր թուրքերէն գրութիւններ կէս թերթի վրայ և ունի 1231 թուականը որ հաւասար է 1782ի։ Ասիկա ճիշտ չի կրնար ըլլալ քանի որ հրատարակութեան թուականը 1795 է, այսինքն 13 տարի վերջ տպուած։

Թիւ 51. — Տօնացոյց Ա. հատոր տպագր. Պ. Արապեան Ապուչեխցիի Օրթագիւղ Կ. Պոլիս 1834։

Թիւ 52 և 53. — Խորհրդատետրներ. Յոհաննէսի և Պօղոսի Ապուչեխցւոց տպարանէն Կ. Պոլիս հրատ. ՌՄԼԶ յուլիս ԻԱ. (1787)։

Թիւ 54. — Բապպ վէ.... Եւն իզմիրտէ կուլիէլմոս կրիֆիթին պասմախանէսինտէ 1843։

Թիւ 55. — Աւետարան տպ. Կ. Պոլիս 1805ին Մահտեսի Աստուածատուրի որդի Առապեան Յոհաննէսի և Պօղոսի ի Քիւրքճի խան։ Ունի հետեւեալ ձեռագիր յիշատակարանը։

«Յիշատակ է այս սբ. Աւետարանս փըռկագործ սբ.ի գաղաքըն Ֆիլիպէ հուչակաւոր սբ. Գէորգ եկեղեցւոյն և ետու զայս մատեանս ընծայ թուին հայ ՌՄԾԸ (1809) դեկտեմբեր ԺԸին տուաւ նորապսակ տէր Միքայել .... ի Կոստանդնուպոլիս»։

Արծաթապատ կողքը կը ներկայացնէ Քրիստոսի խաչելութիւնը և յարութիւնը։ Ծանրութիւն արծաթի 840 կրամ։ Թիւ եկեղեցական անօթից 84։ Գրքիս վերջը կայ.

«Տէր ասված ՌՃԻԷ թէքտեմբեր Գ մայնը է աս քուէլմճու հանը Գէորգ Ֆիլիպէու սուրբ Գէորգ եկեղեցիս է սուրբ աւետարանս և կամաւ».... անհասկանալի երկու երեք բառ։

Թիւ 56. — Վերոյգրեալ աւետարանին նման ուրիշ աւետարան մը արծաթապատ կողքով ընտիր գործ սա յիշատակարանով. «Յիշատակ է այս ոսկեզօծեալ արծաթապատ սբ. Աւետարանս Ֆիլիպէի Սբ. Գէորգ և Ս. Խաչ եկեղեցւոյն, զոր ընծայեաց Երզնկիացի .... սարաֆ Կարապետ աղայն, ի յիշատակ ննջեցելոցն եւն ՌՄՁԸ (1839) հայոց թուականին»։

Այս արժէքաւոր և ջոնաղ գործը կը կրէ եկեղեցական անօթից թիւ 82, արծաթին ծանրութիւնն է կրամ 725։ Գրքին ետեւը ոսկեզօծ արծաթ տախտակի մը վրայ կայ. «Յիշատակ է սբ. Աւետարանս բոխարցի Վարդ Ճըրասօնեան սարաֆ Կարապետ աղային դուռն սբ. Գէորգայ որ ի Ֆիլիպէ ՌՄՁԸ (1839)։

Թիւ 57 և 58. — Էջմիածին տպուած երկու մաշտոցներ, 1905։

Թիւ 59. — Նարեկ Կ. Պոլիս 1858 Յ. Միւհէնտիսեան։ Ունի սա յիշատակարանը։ «Այս նարեկը Պետրոս Պողոսեան կուտայ սբ. Աշակերտն վարդանանց զօրավարին դպրատունին 1863 յունվար 20։ Յետոյ ներսի կողմը». «Այս նարեկը Պետրոս Պողոսեանինն է Աստուած շնորհք տայ ամէն. 1869 մարտ 26»։

Թիւ 60 և 61. — Տօնացոյց 1808 Երուսաղէմ։

Թիւ 62 և 63. — Ջայնքաղ շարական 1884 Երուսաղէմ։

Ասոնցմէ զատ կան ուրիշ 7 կամ 8 հատորներ քայքայուած և անկարեւոր, որոնց մասին հոս խօսիլ աւելորդ է։ Այս ցանկը վերջացնելէս առաջ կ՚ուզեմ աւելցնել որ տրուած թիւերը (մէկէն մինչեւ վաթսուն և երեք) պարզապէս իմ կողմէս տրուած թիւեր են ապագայ աշխատանքները աւելի հեշտ ընելու համար, քանի որ Պուլկարահայոց պատմութեան ընդարձակ և մանրամասն և կարեւոր գործին համար օգտակար պիտի կարենան ըլլալ այս և ասոր նման հրատարակութիւններս Բազմավէպի մէջ։

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

digitised by A.R.A.R.@